ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/33033-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1095-02.06.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1) 1-ին, 2-րդ հոդվածներում՝ Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 5-րդ և 5.1-ին հոդվածների 1-ին մասերում՝ «կազմակերպությանն անժամկետ և» բառերի փոխարեն լրացնել «կազմակերպությանը պայմանագրով որոշված ժամկետով» բառերը:

2) 1-ին հոդվածի 2-րդ մասում «կազմակերպությանն» բառի փոխարեն լրացնել «կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքով» բառերը:

3) 3-րդ հոդվածում առաջարկում ենք շտկել վրիպակը՝ հոլովաձևերը համապատասխանեցնելով գործող օրենքին՝ «հանձնված», «ամրացված» և «տրամադրված» բառերի փոխարեն լրացնել «հանձնվող», «ամրացվող» և «տրամադրվող» բառերը:

4) 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 6. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2030 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակն ապահովել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված կամ ամրացված անշարժ գույքը հետ վերցնելու և համապատասխան պայմանագրերի դադարեցման գործընթացը:

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 6-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:»:

Վերոգրյալ փոփոխությունները կատարվել են հիմք ընդունելով՝

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 15-րդ հոդվածի 1-ին մասը,

2. 1-ին կետում առաջարկում ենք հստակեցնել՝ թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում՞ կողմից պետք է իրականացվի հաշվի առնելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը,

3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել են՝ հաշվի առնելով գործընթացների ծավալը և իրականացման իրատեսական ժամկետները:

Առաջարկում ենք նույնաբովանդակ փոփոխություններ կատարել նաև փաթեթի մյուս նախագծերում:

2. **«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1) Նախագծի վերնագրում՝ «ԼՐԱՑՈՒՄ» բառի փոխարեն լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը:

2) 1-ին հոդվածի վերջին պարբերության «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերի փոխարեն լրացնել «Կառավարության» բառերը:

3. **«Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1) 1-ին հոդվածում՝ «Կառավարություն» բառի փոխարեն լրացնել «Հայաստանի Հանրապետության Կառավարության» բառերը:

4. **«Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու օրենքի նախագիծ՝**

1) 1-ին հոդվածով լրացվող՝ նոր խմբագրությամբ շարադրվող հոդված 29-ում առաջարկում ենք կատարել խմբագրական փոփոխություններ՝ փոփոխելով մի շարք բառերի հոլովաձևերը:

Միաժամանակ պարբերության վերջում՝ «Կառավարության» և «Հայաստանի Հանրապետության կառավարության» ձևակերպումները նույնականացնելու նպատակով «Կառավարության» բառի սկզբից առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

5. **«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1) 1-ին հոդվածում՝ «(ամրացված)» ձևակերպումը առաջարկում ենք հանել՝ հաշվի առնելով, որ Նախագծում և փաթեթով ներկայացված մյուս նախագծերում կիրառվում է միայն «հանձնված» բառը:

6. **Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1) Վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառի փոխարեն լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը,

2) առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում լրացնել նոր 2-րդ կետ, որով առաջարկվում է Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ

բովանդակությամբ.

2) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.»:»,

3) 1-ին հոդվածի 2-րդ՝ (լրամշակված 3-րդ) կետ մասում՝ «հանձնված (ամրացված) բառերը փոխարինել «վարձակալությամբ» տրամադրված» բառերով:» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել՝

««ընթացքում» բառից հետո լրացնել «(բացառությամբ պետական կամ ենթակա պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրված պետության սեփականությանը պատկանող հողերի անհատույց օգտագործման դեպքերի, որոնք անհատույց օգտագործման է տրամադրում պետական գույքի կառավարման լիազոր մարմինը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով, սույն օրենսգրքով, անհատույց օգտագործման տրամադրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1-ին կետով սահմանված հողերի օգտագործման դեպքերի) բառերը». » բառերով:

7. **«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին** օրենքի նախագծի 2-րդ հոդվածը առաջարկում ենք խմբագրել հաշվի առնելով փաթեթի բոլոր նախագծերում կատարված փոփոխությունները:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ